

առարկան ոչ այնքան ծաղիկն է որքան շափի զգացումի պակասը: Մարդու երե կորսունակ իր շափառորդինը կամ հաւասարակշռորդինը, ապա կ'անցնի ծայրայեղորթեան, որ անշուշտ, վնասակար է:

Սեր հանրաճանաշ դերասաններէն՝ Պետրոս Ալյամենան, երբ իր մահկանացուն կնքեց, անոր թաղման առիրով այնքան ծաղկեապսակ նորիքած էր Հայ ժողովորդը, որ յաջորդ օրն իսկ յունական թերթերը այսպէս արձագանգեցին: «Եթէ այդ ծաղկեապսակներուն վրայ ծախսուած դրամները դերասանին նորիքուին իր կենանորթեանը, ապա ան ողջ կ'ըլլար իհմա»: Այս խօսքերը աւելի քան իրական են, վասնի անցած են կեանքի բորբայն: Անցեալի մեր հեր գրողները, մտաւրականները, արուեստագլուները, ամենը առանց բացառութեան, արժանացած են այս դժիսն ճակատագրին: Անոնք վաղ ու դառն նաև ճաշակած են վասնի մեր ազգին զաւակները բոլլքած են զիրենք, անտեսած ու մոցոցած: Մահեն եսր ցուցաբերուած յարգանքի պէտք չունին մեր մեծորթինները, երբ անոնց կենդանորթեան կը զլացուի դոյզն բարիկամեցողորդին, զնահատորին, օգնութիւն:

Արդ ուրեմն, փոխան ծաղկեապսակի, մեր ժողովուրդը բոլ ունենայ հետատեսութիւնը եւ բարեմտութիւնը անմահացնելու յիշատակը հանգուցեալին՝ հայրենիքին օժանդակելով՝ բարեսիրական, օգտակար, ազգաշէն զորդ կատարելու, եւ ոչ թէ իր ունեցած նիրական միջոցները յունպէտս վատնելու:

Մենք յոյժ կը հաւատանք որ մեր ժողովուրդը հետզիւտ պիտի շափառէ, իր զգացումը եւ գիտակի, որ չարքաշ աշխատանքով եւ տրնումով ծեռ բերուած գումարները բարոյապէս կարելի չէ յօդ ցնեցնել, այլ հարկ է զանոնք զործածել օգտակար ծրագիրներու վրայ՝ օգնելով վերելիքն մեր ազգին եւ սատար հանդիսանալով անոր բարձրացման:

Ո՛վ Հայորդի, Էական պարտականորդին համարէ, յիշատակի ճրագ մը վատել ի Հայրենիս ...:



Քանի՞ հազար ընտանիք երդիք  
մը կ'ունենար իր զիւտու վրայ...

## ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԵԿԻՎԱՐԴԻ «ԱՊՐԻԼ 24»  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ԺՈՂՈՎԱՑՈՒՆ

### Ներսին Արդ. Ալոյեան

«Ապրիլ 24-ը եղերական ժառանգործիւնն է մեր անցեալին, իսկ իր լուսատր ու անմեռ յիշատակը մեր մէջ ապրեցնելու գործը գերագոյն պարտականորդիւնն է մեր ներկայ սերունդին»:

ԵԿԻՎԱՐԴԻ

**Ե**ղիվարդը հայ բնարերգութեան նշանաւոր դէմքերից է, որ բախս է ունեցել զրեթ: Կէս դար շարունակ ապրել ու ստեղծագործել իր ականաւոր ժամանակակիցների՝ Յակոր Օշականի, Վահան Թէրեւեանի, Բենիամին Նորիկեանի, Անդրանիկ Անդրեասեանի, Արամ Հայկազի, Վահէ Հայկի եւ ուրիշների կողքին՝ նաև ականակից լինելով մեր բանաստեղծական մտքի զարգացմանն ու նրա գօրացման առաջընթացին:

Եթէ փորձենք ուրուագծել Եղիվարդի կերպանկարը, ապա պիտի նշենք, որ նա բացարձակ անհատականորդին էր, որի խօսքը՝ գործի ծաղիկն էր: Նրա տաղանդի աշքի զարնուող իրայատկութիւնը ազնուութիւնն էր ու անկեղծութիւնը: Իր կոչումով, իր ճակատագրով, իր ամբողջ կեանքով ու աշխատանքով անմիջական շառադիդն էր իր նախորդների, նրանց մեծ գործի շարտնակողը, բարդ ու դժուարահաճ սիխութքահայ աշխարհում:

Իր ողջ կեանքի մեծ մտահոգութիւնը ջլատուած ուժերով, փշուր-փշուր, աշխարհով մէկ ցրուած, անկայան, անապաւէն, անյոյս, անհեռանկար սիխութքահայ իրադրութիւնն էր, օստարակուլ ովկիանոսներում հայածին տաղանդների կայծկլուալով սլունելու ցաւը, հնարաւոր փրկելու, անհնարինը իրականացնելու մշտական հոգսը այրուել է շարունակ նրա հայրենասէր հոգում, նրա հնարամիտ, ամենուրեք օգնող ու հասնող նրա զործարար կեանքում, խորունկ դաւանանք, կամք եւ ոյժ է դարձել ու տար սմունդ է տուել նրա գրական գօրաւոր տաղանդին:

Իր բարդ ճակատագրով, ճարմանդ ու յախուն այրումների մէջ, իր բարդ ու դժուարին կեանքով Եղիվարդը ստեղծել է մի սրտայորդ ու հարուստ գրականորդին, ստեղծել է հայրենաշունչ ու հայրենապինդ գործերի մի գունագեղ շարան, մի թանկ հարստորթին: Փորձել է մեր հոգեւոր մշակութային անդաստանին նոր չունչ տալ, գօրացնել հայի հաւատքը եւ ողին: Եւ ինչ էլ երգել է նա՝ հայրենի սէր, ներանձնական զգացումներ, հաւատքի ոյժ՝ համամարդկային գաղափարներ կամքափարներ

արտայայտում: Այդպէս է, ճշմարիտ ազգայինը նաև միջազգային ու համամարդկային է:

Հինգ տարեկանից անցել է Եղեռնի արհայիքներով, գրկուած ծնողներից, բոլոր քանկ հարազատներից, ծանր կորուստների մշտական կակիծը մատղաշ սրտի մէջ, նետուել է նա որրանցից-որրանոց: Մեծացել, ամրացել է օսար ափերի անկայուն մըննորտում և դիմացել յարափոփոխ եղանակներին:

Աշխարհով մէկ սփոռուած իր վտարանոյի ժողովոյի մշտական ցաւերն ու խորունկ խնդիրները տուել են նրան ընկալող տար սիրտ. դառն ու դժուար կեանքը տուել է նրան արրուն քափանցող միտք ու տոկունորիւն. մեծ կորուստների ծանր կակիծը տուել է նրան անզիջող ողի. մեր ամբողջ պատմութիւնը տուել է նրան իմաստուն դասեր ու փորձառութիւն: Եւ այս ամենով ամրացած, քանաստեղծ գործիչը իր ամենօրեայ հոգսերի հետ միասին գործի է դրել իր գօրաւոր գրիշը, ստեղծելով քաւական հարուստ մի գրականորիւն, որի իմանական մոտիւր մարդու հաւատն է ու ողու մեծորիւնը:

Իր սկզբնաւորման շրջանից՝ 20-րդ դարի 40-ական բուականներից սկսած՝ Եղիվարդի քանաստեղծորեան զիշաւոր իրայատկորիւնը «օրինազանցութիւնն է», որ նոր ժամանակ է ստեղծում, այնուհետեւ՝ անհատական սուր ներքին տեսողութիւնը, որ, սահմանազանցելով «կարգը», նոր կարգ է սահմանում: Նրա անցած ճանապարհի վայրկեաններն անզամ ապրուած են նրա քանաստեղծորեան մէջ, ժամանակի նշաններն արտայալուած՝ նրա գրքերում:

Եղիվարդի քանաստեղծորեան ժամանակը երեկոն է, այսօր և զայիքը: Մի ամբողջ յափտենութիւն, որ կերտել է քանաստեղծը իր գրականորեամբ, մեր քանաստեղծորեան հարստութիւնն է, անշնչելի հետքը: Քանաստեղծի այն նոր կերպարը, որ ստեղծել է Եղիվարդը դեռևս «Խորտակման Գիշերները» քանաստեղծորեամբ, ոչ թէ ժամանակի կեղծ երկուորեակն է, այլև կրուն է իր մէջ ժամանակի ամբողջութիւնը՝ իրականանիերելի, որբերգական:

Ես Եղիվարդն եմ այս զիշեր.

Կեցած Սիոն լեռան վերեւ,

Իրեւ պահնորդ ու պահապան

Սուրբ Յակոբայ ժառանգորեան,

Որուն վրայ պարն ոսկի

Մարդոց սրտին,

Կը ծածանի երանագին:

Անուշութիւնն այս ամենուն,

Բաժակ մ'արցունը բռնած աշքիս,

Լուս կը նայիմ անցեալներուն

Ուշեապարան:

Գեղեցկութիւնն այս ամենուն,

Գործն է քազկին նախնիքներուս,

Բխած սրտին անոնց իրաշը...

Երեւ «Մագրադինեն Մեղրամոնտ» ոռումը ուժգնութեամբ շեփորեց Եղիվարդի մուտքը հայ քանաստեղծորեան անհաստան, երեւ «Խորտակման զիշերներ»ը Եկան այդ տաղանդի տոկունութիւնն ու իրաւացիութիւնը երկրորդելու, «Ապրիլ 24»ը, սակայն, Եկա հայ քանաստեղծութիւնը օժտելու աննախնքաց պատզամով ու յշեցնելու հանրութեանը 100-ամեայ ցափի՝ Մեծ Եղեռնի եւ մեր մէկուկէս միլիոն «զարնանամահ վկաների» կարմիր նախճիրի մասին:

«Ապրիլ 24»ը սովորական քանաստեղծութիւնների հասոր չէ, այն հականալու համար անհրաժեշտ է ծանօթ լինել Եղիվարդի ստեղծագործական աշխարհին, ոճին, իմացական և գաղափարական ուղղուածութեանը:

«Ապրիլ 24»ը քաժանում է չորս զիսաւոր մասերի:

«Հայրենական» քաժինը, որ քաղկացած է 25 քանաստեղծութիւնից, քացում է ծօներգային ըսոյթի հայրենասիրական «Ապրիլ 24», «Եղեռերգ», «Երկու Կարաւաններ» երկարաշունչ որբերգերով, իսկ մնացեալը Երեսանին, Ղարաբաղին, Արարատին, Լենինականին, Պաղեստինցիներին նուիրած ծօներգեր են:

«Ապրիլ 24» քանաստեղծութիւնը ամբողջովին տոգորուած է անսահման ցաւով, որը իրօրինակ պատկերուունով հեղինակը տեսանելի է դարձնում եւ ընթերցողի հոգում արբնացնում ցասման ու վրէժի շոնչը.

Ու կը պայրին իրազեններ,

Կրակ-կրակ, կամար-կամար:

Կը բարձրանան այս ու այն կողմ

Սարասիահար երեւոյներ, դէմքեր, աշքեր,

Չերք կտորներ, ալիքներու,

Հարուածին տակ կապարներու,

Հովին ներքեւ կը դողդրան պահ մը անոնք,

Ու կը քափին նորէն գետին...

Եղիվարդի ցանկութիւնն էր գրական էջերով ամբողջացնել հայ հերոսների կերպարները, եւ խօսելով նրանց զիհողութեան ոգու մասին միշտ ասում էր. «Հայ գրականութիւնը տակաւին իր տուրքը չէ վճարած այդ հերոսական մարտիկներուն»: 1988-ի Ղարաբաղեան դեպքերը շատ քան խորտակեցին իր մէջ եւ նա մարտի դաշտ հանելով իր գօրեղ գրիշը՝ ծօներգ-կոչ ուղղեց «Ղարաբաղի հայորդիներին»:

Ղարաբաղի հայորդիներ,

Ունեցէք սէրը ծեր հողին,

Ոչ թէ տժգոյն յուշի նման,

Այլ տեսիլիք պէս լուսավառ:

Մի՛ բողոք զայն քախտին լըրուած

Անտէր կալուած:

Հայու նման կանգնեցէր դուր

Այս աշխարհի խղճին վրայ,

Ազատութեան իրեւ արձան:

Իր ստեղծագործութիւնների մեծ մասի նիւթը նա դնարում էր Սուրբ Գրքի զիսաւոր դրուազմերից, տալով իր հերոսներին և գրծող անձանց մօս ժամանակների մարդկանց կեանքն ու ողին, մէջտեղ յնելով իրեն յուզող այսօրուայ հարցերն ու խնդիրները: Սա զրական ընդունուած ձեւ է, սակայն հեղինակը օգտագործում է այն իր զրադունքի ու իր կեանքին ընորոշ գծերով:

«Սուրբ Գրական»՝ թիվիական թեմաները քանաստեղծ մշակել է Մեսրոպեան հարուստ ու յստակ լեզուով, կենդանի պատկերներով, տարտար բրրում ու լեցոն կեանքով, իր Մեսրոպեան ընթերցողի համար: Վերցնելով հեռաւոր անցեալի թեմաները, քանաստեղծը իր արուեստով տախս էր այսօրուայ գոյն ու երանգ, բնական մարդկային մտորումներ, ցաւեր ու խնդիրներ, ժամանակի շնչառութիւն, միանգամայն պահելով սրբազն վեհութիւնը, դրանով ցոյց տալով իր նախընտրած թեմաների խոր մարդկայնութիւնը:

«Սուրբ Գրական» թեմաներից է «Օրօ» քանաստեղծութիւնը, որտեղ մանկացած Աստծու համար գողուրիկ օրօ են երգում մանուկ չեղած հրեշտակների թերաները, որպէսի լուսածին մանուկ Յիսուս անոյշ ընով արթենայ: Սակայն Յիսուս այդ զիշեր քուն չուներ:

Օր Ռ մանկացած Յիսուսին համար,  
Թերանեն անոնց որ մանուկ չեղան...  
Օր Ռ լուսածին Յիսուսին համար,  
Թող անոյշ րունով մանուկն արթենայ...  
Օր Ռ որբացած պանույստ Աստուծոյն,  
Երկինքն իշած՝ կ'երգեն հրեշտակներ,  
Յիսուս այս զիշեր ինչո՞ւ չունի քուն,  
Աստղերէն անդին՝ նայուածքը սեւեն:

«Անձինք Նուիրեալը» բաժնի ինքնատիա քանաստեղծութիւնները ծօնուած են Հայ Եկեղեցու նուիրեալներին: Ըարքը քացում է Գրիգոր Շորայակիր Պատրիարքին նուիրուած քանաստեղծութեամբ: Պատմական անորով իրեն Երսաւադի Ս. Աքոռին եւ նրա պայծառացմանը նուիրուած Շորայակիր Պատրիարքի գործը անուրանայի է: Պարանոցին ծանր երկարէ խաչեր ու շղթաներ, շորքին աղօթք, աշերեն արցունքուն նա կանգնում էր Եկեղեցիների մուտքին եւ դրամ մուրում Երուսաղէմի Ս. Աքոռը պարտքերից ազատելու համար: Եւ Եղիվարդը, որ նրա մեծ գործի շարունակողն էր, «Շորամերու լեզուն» քանաստեղծութեան մէջ վրձնի մի քանի հարուածով նկարագրում է ժամանակի շարադէս թերումների ու մարդկային ապիրատութեան դաշնակցութեամբ Երուսաղէմի Ս. Աքոռի շուրջ ստեղծուած իրավճակն ու դրանից ազատուել տենչացող Շորայակիր Պատրիարքի գործողութիւնները:

Պարանոցին ծանըր երկար,  
Շուրբին օրինենքն,  
Ան կը կենար դարպասներուն Եկեղեցւոյ,

Պալատներու շրեղ մուտքին:  
Ո՞վ էր մուրիկն այս սրբազն,  
Տարաշխարիկի,  
Որ սիրտէ-սիրտ, երկրէ-երկիր,  
Քարշ էր տուեր ուրերն իր հեր.  
Չին ճանշած քուն ու հանգիստ  
Աշըներն իր,  
Ըսպասին մէջ իր Աստղեցյն  
Եւ իր Եղին,  
Հրաշատիպ ու աննահանջ:

«Լերան վրայէն թերքուածներ»ը «Ապրիլ 24»ի վերջին և ամենաանդրկուն բաժինն է՝ 41 քանաստեղծութիւններով: Ծարքը հարուստ է իր այլազանորեամբ կեանքից վերցուած տարբեր երեւոյների խոր ու գեղարուեստական վերլուծուններով: Նա յաճախ իր հոգեվիճակը շաղախսել է բնուրեան այս կամ այն երեւոյթին, ասես նրանից ուժ ստանալու աղերսով.

Վարսունի սեմին՝ կեցած եմ արդէն,  
Գլուխ պակասուած արծարովն աշնան,  
Հոգիս կ'անցնի ասեղ առ ասեղ,  
Մըսուր մ'անսովոր,  
Իբրեւ նախերգանք ճօտեցող ծմրան:  
Թըլոշոնի թեսով քըսան ու զացին,  
Օրենք իմ աղուոր,  
Հովերը առին պտուղներս ամէն,  
Թարմ ու հոտառատ,  
Որոնցնով այնքան հարուստ էր հոգիս,  
Դեռ անցեալ ամառ:

Տաք ու գունագեղ էր նրա քանաստեղծական նկարչութիւնները: Նրա օրենք ու նրբաշաղ գրիշը հարուստ ու շոայլ էր իր տիրոջ նման, յստակ ու ամրակամ, երբեմն կոչտ, յաճախ շատ հանդարս ու մեղմախօս: Քանաստեղծութիւնը ինքը՝ հեղինակն էր, իր քարի ու քուս տողերի մէջ առատօրէն շաղ էր տախս լեզուական իր յօրինուածքները, գիտերն ու փայլատակումները զարմանալի թերեւորեամբ ու բնական, առանց ծիգերի եւ արիեստական նօթաների: Հայոց լեզուն մի զարմանալի ոսկեշաղախ էր նրա ծեռքերի մէջ և լեզուաշէն քանաստեղծը ծուլում էր իր ուզած ծեւերն ու ոները:

Նրա լեզուն ծոխ էր, յաճախ վեհ ու քարձը, քայց ոչ երեր վերամբարձ: Ընդհակառակը, պարզ էր ու չերմ, ընկալուող ու համակող: Իր ազատ ու հարուստ լեզուաշաղախի մէջ, նա զարմանալի դիրութեամբ էր դասաւորում իր ծուլած քառերը, որոնք միշտ ներդաշնակում էին ամրողութեան հետ եւ մի առանձին հմայք էին տախս գործին, քանի որ արտօմ էին բնածին ճաշակով: Նրա ստեղծած քուլոր քառերն ու հնարանքները թիսում էին հենց մայրենի լեզուի խորրում եղած հնարաւորութիւններից, իսկ դա ամենաքանին է որեւէ զրականութեան համար:

Նրա գրիչը պատկանում է բոլորին, նրա դիզան գրական հարստութիւնը ամէն մեկիս հարստութիւնն է:

Եղիվարդը իբրև ստեղծագործող, իբրև վառ անհատականութիւն մեր գրականութեան մէջ իր մնայուն տեղն ապահովել է իր անխարդախ, մեծ ու գորատոյ, ազնի գրիչով եւ բազում հրատարակութիւններով:

Ամփոփելով «Ապրիլ 24» բանաստեղծութիւնների ժողովածուն, պէտք է ասել, որ Եղիվարդի

պերճ, տիրական, բարձրաբուիչ եկեղեցականի բոլոր գրական ու հոգեկան տուրքերի խօսուն արձանագրութիւնները հենց «Ապրիլ 24» ժողովածոյի մէջ գետեղուած տասնեակ թերրուածքներն են: «Ապրիլ 24»ը հայ բանաստեղծութեանը օժտեց աննախընթաց պատզամով և հանրութեանը յիշեցրեց 100-ամեայ ցամի՝ Մեծ Եղեռնի եւ մեր մէկուկես միլիոն «գարնանամահ վկաների» կարմիր նախճիրի մասին:



### ՀԱՅՈՑ ԳՈՂԳՈԹԱՆ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԵԶ



Ժանսեմ



Փոլ Կիրակոսեան